Իրավաբանական անձի պետական գրանցման

ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա226373

Իրավաբանական անձի անվանումը

«ՈՒՂՂԱՓԱՌ ԿԱՆԱՆՑ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Գրանցված է Պետական ռեգիստրի
Կենտրոնական մարմնի կողմից

Գրանցման համարը **211.171.76373**
Գրանցման ամսաթիվը **2012-03-13**
Իրավաբանական անձի ծածկագիր(կոդը) **41637959**
Հարկ վճարողի հաշվառման համար **00876415**
Իրավաբանական անձի տեսակը **ոչ առևտրային**
Գործունեության ժամկետը **անժամկետ**

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

"13" 03 2012 թ.

L.S.

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ միասին

ՆԵՐԴԻՐ 001

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 03Ա226373 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը **«ՈՒՂՂԱՓԱՌ ԿԱՆԱՆՑ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Գտնվելու վայրը **Զ. Քանաքեռցու փ. / շ. 68 / ք. Երևան 0091 Հայաստան**

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար,
Նախագահ՝ Անահիտ Գրիգորյանց
անձնագիր **AF0487407**, տրվ. **2002-08-20, 011** կողմից,
հասցե **«Նաիրի» հյուր. / ս. 233 / ք. Երևան 0047 Հայաստան**

Իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և գրանցման համարը —

Այլ տեղեկություններ —

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

"13" 03 2012 թ.

L.S.

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2017-11-08

«ՈՒՂՂԱՓԱՌ ԿԱՆԱՆՑ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Գրանցման համար	**211.171.76373**
Հիմնադրման տարի	**2012**
Գրանցման ամսաթիվ	**2012-03-13**
Գործունեության ժամկետ	**Անժամկետ**
Կարգավիճակ	**Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	**41637959**
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	**00876415**
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	**176373**
Էլ. փոստ	**annagrig7@fgmail.com**
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	**Զ. ՔԱՆԱՔԵՌՑՈՒ ՓՈՂ. / Շ / 68 Ք. ԵՐԵՎԱՆ 0091 ՀԱՅԱՍՏԱՆ**
Հեռախոս	**(10)000000**

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	**Նախագահ**
Անուն Ազգանուն	**ԱՆԱՀԻՏ ԳՐԻԳՈՐՅԱՆՑ ԵՐՎԱՆԴԻ**
Անձնագրային տվյալներ	**006167944 2017-07-18 010**
Հասցե	**ՆԱԻՐԻ ՀՅՈՒՐԱՆՈՑ / ՍԵՆՅԱԿ / 233 ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ 0047 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

ՕՐԻՆԱԿ 3

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՈՒՂՂԱՓԱՌ ԿԱՆԱՆՑ ՄԻԱՎՈՐՈՒՄ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ
ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

«07» հունվարի 2012 թ.

ՆԱԽԱԳԱՀ՝

_ԱՆԱՀԻՏ ԳՐԻԳՈՐՅԱՆՑ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ

« 13 » 03 2012թ.

Գրանցման թիվ 211.171.76373

Վկայական 032226373

Հարկ_վճարողի հաշվառման համար __

00876415

Պետական ռեգիստրի ղեկավար

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՈՒՂՂԱՓԱՌ ԿԱՆԱՆՑ ՄԻԱՎՈՐՈՒՄ»

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2012 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Ուղղափառ կանանց միավորում» բարեգործական հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն), ոչ առևտրային կազմակերպություն է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա օրենքով սահմանված կարգով միավորվել են ֆիզիկական անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակության առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:
1.2 Կազմակերպությունը գործում է ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:
1.3Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, կամավորությունը, իրավահավասարությունը, ինքնակառավարումը և հրապարակայնությունը:
1.4 Կազմակերպությունը գործում է ՀՀ ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
1.5 Կազմակերպության լրիվ անվանումն է՝ «Ուղղափառ կանանց միավորում» բարեգործական հասարակական կազմակերպություն:
1.6 Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Զ. Քանաքեռցու փ., շ 68:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Կազմակերպության գործունեության նպատակներն ու խնդիրներն են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝

- Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Մոսկվայի և համայն Ռուսիո Սրբազնագույն Պատրիարքի և Հայաստանում Ռուս Ուղղափառ եկեղեցու առաջնորդի հովանավորությամբ, Հայաստանում բնակվող ռուս, հայ և այլ ազգության կանանց միավորումը հանուն Ռուսաստանի և Հայաստանի վերածննդի և Հայ-Ռուսական հարաբերությունների ամրապնդման,

2.2 Կազմակերպության նպատակներն են՝

- Աջակցել բարոյական, հոգևոր արժեքների ամրապնդմանը հասարակության մեջ,
- Սատարել և պաշտպանել բազմազավակ ընտանիքների, միայնակ մայրերի, միայնակ կանանց և անապահով քաղաքացիների իրավունքները,
- Աջակցել հասարակության մեջ աբորտների նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը,
- Աջակցել հասարակության մեջ հայրենասիրության և պատմական հիշողության ամրապնդմանը,
- Քարոզել ընտանիքում և հասարակության մեջ կնոջ դերի և նշանակության վերաբերյալ ավանդական, բարոյական հայացքներ,
- Պաշտպանել դժվար ընտանեկան դրության մեջ հայտնված, առանց ծնողների խնամքի մնացած, ինչպես նաև ծնողազուրկ երեխաների իրավունքները,
- Միավորել ստեղծագործական ուժերը հետևյալ խնդիրների լուծման համար՝ հոգևոր վերածննդի, մշակույթի, տնտեսության, բնապահպանության, շրջապատող միջավայրի և բնական աղբյուրների պահպանության, հասարակական կյանքի ոլորտում, ռուս, հայ և այլ ժողովրդների միջև բարեկամական հարաբերությունների ամրապնդման, ազգամիջյան երկպառակտության և անջատողականության հաղթահարման և միջազգային ահաբեկչության դեմ պայքարի գործում,

- Շահագրգռված այլ մարմինների հետ համատեղ միջոցներ ձեռնարկել ազգի առողջության ամրապնդման համար,
- Կազմակերպել ժողովներ, հանդիպումներ, կոնֆերանսներ, ֆորումներ և այլ միջոցառումներ՝ հասարակական կյանքի կարևորագույն հարցերի շուրջ լուծումներ առաջարկելու համար,
- Մշակել և իրականացնել կրթական, մշակութային-լուսավորչական, սոցիալ-տնտեսական և այլ ծրագրեր, որոնք նպաստում են ուղղափառ ինքնագիտակցության, հայրենասիրության և քաղաքացիական պատասխանատվության, Ռուսաստանի և Հայաստանի ժողովրդների բարեկամության և ազգամիջյան փոխըմբռնման ձևավորմանը,
- Ժողովրդական նախաձեռնությունների աջակցությունն ու սատարումը Ռուսաստանի և Հայաստանի, ռուսների, հայերի և այլ ժողովրդների կրոնական, մշակութային բարոյական և սոցիալ-տնտեսական վերածննդի գործում՝ անկախ իրենց բնակության վայրից,
- Ցույց տալ գիտամեթոդական և գործնական օգնություն ռուսների մշակութային կենտրոնների և համայնքների ինքնակազմակերպմանը,
- Աջակցել Ռուսաստանի, Հայաստանի և այլ երկրների ժողովրդների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը՝ առանց բռնության խաղաղության հաստատման նպատակով,
- Աջակցել ազգային դաստիարակության և կրթության բոլոր մակարդակների համակարգի կայացմանը,

2.3 Կազմակերպությունը կարող է իրականացնել սույն կանոնադրությունից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքով սահմանված կարգով կազմակերպության անդամ կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի, որը ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը:

3.2 Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության խորհրդին (այսուհետև՝ Խորհուրդ):

Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Խորհուրդը:

3.3 Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից զրկումը տեղի է ունենում Խորհրդի որոշմամբ:

3.4 Կազմակերպության այն անդամը, որը Խորհրդի կողմից սահմանված լինելու դեպքում վեց ամիս անընդմեջ չի վճարում անդամավճար, Խորհրդի որոշմամբ զրկվում է անդամությունից: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

ա/ ընտրել և ընտրվել Կազմակերպության բարձրագույն և այլ մարմիններում.

բ/ Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ և բողոքներ.

գ/ սպառիչ տեղեկատվություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին.

դ/ ազատ դուրս գալ Կազմակերպությունից.

ե/ Կազմակերպությունից ստանալ իրավական օգնություն՝ ուղղված իր օրինական շահերի պաշտպանությանը.

զ/ մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին.

է/ Կազմակերպության ղեկավար մարմինների ոչ կանոնադրական գործունեության դեմ գրավոր բողոքարկել ժողովին, կամ դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

4.2 Կազմակերպության անդամը պարտավոր է՝

ա/ հոգ տանել Կազմակերպության հեղինակության մասին.

բ/ կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները.

գ/ մուծել մուտքի վճար և ամսական անդամավճար՝ Խորհրդի կողմից սահմանված լինելու դեպքում, որոնց չափն ու վճարման կարգը սահմանում է Խորհուրդը.

դ/ բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները.

4.3 Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Կազմակերպության ժողովի կամ Խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության, Կազմակերպության անդամությունից զրկում:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1 Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ՝ պետական գրանցման պահից:

5.2 Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, կնիք՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա արժույթով, իր անունից կարող է ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում:

5.3 Կազմակերպությունը կարող է ունենալ խորհրդանիշ:

5.4 Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:

5.5 Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

ա/ տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին.

բ/ հիմնադրել լրատվության միջոցներ.

գ/ կազմակերպել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր.

դ/ ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

ե/ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ իր կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների միջոցով.

զ/ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, վարձակալել և օգտագործել անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, օրենքով չարգելված այլ գույք.

է/ օտարել կամ վարձակալության կամ անվճար օգտագործման հանձնել Կազմակերպությանը պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք.

ը/ կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ.

թ/ ինքնուրույն կազմավորել և տնօրինել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում՝ արտարժույթով.

ժ/ իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, այդ թվում՝ կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային հասարակական կազմակերպություններին, իր անդամներին և այլ անձանց գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

ի) Իր աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար կազմակերպությունը կարող է հաստատել անհրաժեշտ կանոնակարգերը:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Կազմակերպությունը պարտավոր է՝

ա/ ցանկացած ֆիզիկական անձի պահանջով, յոթ օրացույցային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու կազմակերպության կանոնադրությանը.

բ/ օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.

գ/ իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության ժողովի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը.

դ/ պետական կառավարման լիազորված մարմնի պահանջով նրան տրամադրել իր բարձրագույն և այլ մարմինների որոշումների պատճենները, Կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմինների ներկայացուցիչներին ներկա գտնվել Կազմակերպության ժողովին.

ե/ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին.

զ/ առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկ ամսյա ժամկետում դիմել պետական գրանցման մարմին, սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար.

է/ վարել իր անդամների հաշվառումը.

ը/առանց լիազորագրի կազմակերպությունը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի և (կամ) կազմակերպության գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, 14 օրացույցային օրվա ընթացքում պետական գրանցման մարմին ուղարկել այդ անձի անձնագրային տվյալները և (կամ) Կազմակերպության գտնվելու վայրի հասցեի մասին տվյալները:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ժողովին:

7.2 Ժողովը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ: Ժողովը հրավիրում, դրա անցկացման կարգն ու ժամկետները որոշում է Խորհուրդը: Եթե Կազմակերպության անդամների թվաքանակը անցնում է հարյուրի սահմանը, ապա Խորհրդի կողմից սահմանված կարգով ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները:

Կազմակերպության արտահերթ ժողով հրավիրվում է Կազմակերպության անդամների մեկ երրորդի կամ Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) պատճառաբանված պահանջով՝ Խորհրդի կողմից՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով՝ ոչ ուշ, քան 14 օրացույցային օրվա ընթացքում:

7.3 Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

ա/ Կազմակերպության կանոնադրության հաստատումը և փոփոխումը.

բ/ Կազմակերպության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրությունը, այդ մարմինների կազմի փոփոխումը կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

գ/ Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը:

դ/ Կազմակերպության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումների ընդունումը.

7.4 Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության անդամների կամ պատվիրակների կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են բոլոր անդամների կամ պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.5 Խորհուրդն ընտրվում է Ժողովի կողմից երկու տարի ժամանակով:

Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Կազմակերպության նախագահի կողմից ոչ ուշ քան վեց ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, Խորհրդի երկու անդամների կամ Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) պահանջով:

7.6 Խորհուրդը՝

ա/ հաստատում է Կազմակերպության նախագահի հաշվետվությունները, այդ թվում՝ Ժողովին ներկայացվող հաշվետվությունը.

բ/ առաջարկություններ է ներկայացնում Ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ.

գ/ ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում կամ զրկում անդամությունից.

դ/ Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ և տույժի միջոցներ.

ե/ ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը՝ ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում.

զ/ սահմանում է Կազմակերպության անդամների կողմից մուտքի վճարի և անդամավճարի մուծման կարգը, չափերը և ձևերը.

է/ ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության՝ մեկ միլիոն դրամը գերազանցող արժողությամբ գույքը.

ը/ ստեղծում և լուծարում է Կազմակերպության հիմնարկները, առանձնացված ստորաբաժանումները /մասնաճյուղեր, ներկայացուցչություններ/, ինչպես նաև հաստատում է նրանց կանոնադրությունները.

թ/ հաստատում է Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը, աշխատողների վարձատրության կարգն ու չափերը.

ժ/ սահմանում է Կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված անձանց վարձատրության կարգը և չափը,

ժա/ հաստատում է Կազմակերպության հաշվապահական հաշվառման հաշվետվությունները.

ժբ/ իրավունք ունի քննարկել և լուծել Կազմակերպության գործունեությանն ու կառավարմանն առնչվող ցանկացած հարց, բացառությամբ Ժողովի բացառիկ իրավասությանը վերապահվածներից:

7.7 Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են իր անդամների կեսից ավելին:

Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:

7.8 Կազմակերպության նախագահն ընտրվում է ժողովի կողմից 2 տարի ժամանակով:

7.9 Կազմակերպության նախագահը.

- ղեկավարում Խորհրդի աշխատանքները և վարում է նրա նիստերը.
- ներկայացնում է Կազմակերպությունն առանց լիազորագրի.
- իրականացնում է Կազմակերպության ողջ գործադիր ղեկավարումը.
- արձակում է հրամաններ, տալիս է լիազորագրեր.
- օրենքով սահմանված կարգով կնքում է գործարքներ, ստորագրում է պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացում բանկային հաշիվներ.
- հաստատում է Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը, աշխատողների վարձատրության կարգն ու չափերը.
- ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության՝ մինչև մեկ միլիոն դրամ արժողությամբ գույքը՝ ցանկացած չափի և քանակի:

7.10 Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) ընտրվում է Ժողովի կողմից 2 տարի ժամանակով: Խորհրդի անդամները և Կազմակերպության նախագահը չեն կարող լինել Վերահսկիչ հանձնաժողովի անդամներ:

7.11 Վերստուգիչ հանձնաժողովն (վերստուգողը) իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են տարեկան առնվազն 2 անգամ: Նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, հանձնաժողովի անդամների մեկ երրորդի, Կազմակերպության նախագահի կամ Խորհրդի պահանջով:

7.12 Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների 2/3-ը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Եթե վերհսկող մարմինը վերստուգողն է, ապա նա որոշումներ է ընդունում միանձնյա:

7.13 Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) կարող է Կազմակերպության նախագահից և այլ աշխատողներից պահանջել Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած տվյալներ և հաշվետվություն:

7.14 Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) պարտավոր է հաշվետվություն ներկայացնել Ժողովին՝ Կազմակերպության գործունեության, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ ամփոփ տվյալների ստուգման արդյունքների մասին:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:

8.2. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:

8.3. Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել՝

- Կազմակերպության անդամների մուտքի վճարները, անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները,
- բանկերից և վարկային կազմակերպություններից ստացված վարկերը,
- դրամաշնորհները,
- բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները,
- Կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների կողմից փոխանցված գումարները,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը:

8.4. Կազմակերպության սեփականությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:

8.5. Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

8.6. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի և կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար:

8.7. Կազմակերպության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում ընտրված անձինք կազմակերպության կողմից կարող են վարձատրվել: Նշված անձանց վարձատրության չափը սահմանում է Խորհուրդը:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

9.1 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

9.2 Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի կամ դատարանի որոշմամբ: Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:

9.3 Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, Ժողովի որոշմամբ սահմանված կարգով,

օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ, եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

Սույն կանոնադրությունը կազմված 07.01.2012թ.

Настоящий документ
в подлинном